«Երիտասարդ պատմագետների ասոցացիա» ՀԿ-ի EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Ինչպե՞ս ձևավորել սովորողների մեջ արժեքային համակարգը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում »

Հետազոտող ուսուցիչ՝ Քրիստինա Հարությունյան
(Գեղաքունիքի մարզ,ք.Սևան Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց)

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

- Ներածություն_____3

  Գլուխ I. Արժեքներ _____5-9
- Գլուխ II . Ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը և կարևորությունը սերունդների դաստիարակության գործում_____10-12
- Դասի պլան_____13-18
- Եզրակացություն_____19
- Գրականության ցանկ_____ 20

Ներածություն

Հետազոտական աշխատանքս հետևյալն է «Ինչպե՞ս ձևավորել սովորողների մեջ արժեքային համակարգը դասավանդման ընթացքում»: Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի արդիականությունը և ժամանակակից սերնդի առջև ծառացած մի շարք կարևորագույն խնդիրներ: Լինելով ուսուցիչ՝ նոր սերնդի համար կարևորագույն խնդիրներից եմ համարում բարոյական, ազգային, մշակութային, կրոնական արժեքների ճիշտ ընկալումը և դաստիարակության գործում դրանց կիրառումը: Յուրաքանչյուր ուսուցիչ իր ուսերին ունի դրված առաքելություն՝ այն է կրթելու և դաստարակելու հայրենիքին և պետությանը արժանի պատվախնդիր, բարոյական, ազգային և կրոնական արժեքները առաջնայն և բարձր պահող անհատներ:

Յուրաքանչյուր անձնի արժեքային համակարգի ձևավորման հիմքում իմ կարծիքով դրվում է՝ ազնվությունը, ճշմարտությունը և սերը: Ի սկզբանե երեխայի մեջ պետք է սերմանել ազնվություն իր անձի նկատմամբ, սեր հայրենքի և ազգի նկատմամբ, իսկ ժամանակի ընթացքում այդ սերը պետք է ավելացնել և մեծացնել:

Կարևոր արժեք է համարվում ազնվությունը,քանի որ ազնվության շնորհիվ կարելի է պահպանել ազգային ինքնություն, կրոնական պատկանելիություն և այլ արժեքներ:

Կարևոր արժեք է նաև ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս:

Անձի մասին կարելի է դատել նրան բնորոշ արժեքներով, որոնք արտահայտում են անձի ներաշխարհը.այսինքն ազնիվ մարդու վարքի դրսևորումը խոսում է նրա արարքների և կերտվածքի մասին:

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող քաղաքական, որակական և բովանդակային բազմաթիվ փոփոխություններ կարծես մարտահրավերներ են ստեղծում արժեքային համակարգում՝ կշեռքի մի նժարին դնելով ազգային ավանդական արժեքները,մյուսին՝ համամարդկային արժեքները՝ խաղաղություն, միասնականություն, հանդուրժողականություն, ազնվություն և այլն:

Այս մարտահրավերների առկայության պայմաններում նոր սերնդի՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ չիմացության հետևանքով ազգային արժեքները հաճախ մղվում են երկրորդական պլան.դյուրին և հեշտ են դառնում համաշխարհայնացման կործանարար պահանջները: Վերջիններս,

բացասական ազդեցություն են ունենում նոր սերնդի ինքնության, կենսակերպի և արժեհամակարգի ձևավորման վրա։ Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի՝ մերօրյա ազգային առաքինությունների հանդեպ շատերն այլ ընկալում են ձեռք բերել, փոխվել են նաև արժեքային պատկերացումները։ Նույնիսկ դպրոցում ենք հանդիպում աշակերտի և ծնողի կողմից արժեքների ոչ ճիշտ ընկալմանը հետևաբար այս մարտահրավերների պայմանում պետության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից քաղաքական և տնտեսական հարաբերություններն ու օրենքները ըմբռնող այլև ազգային մտածողություն և հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը՝ ովքեր պետք է արժևորեն գիտելիքը ոչ թե գնահատականը։ Այս իրավիճակում պետք է կարողանանք ճիշտ իրականացնել երեխաների կրթությունը և դաստիարակությունը։

Ուստի սահմանելով որոշ սկզբունքներ, առաջ շարժվենք ըստ այդմ՝ առանցքային դերում պահպանելով ազգային արժեքների գերագույն դերը համամարդկային արժեքների համատեքստում։ 21-րդ դարը հումանիզմի դրսևորման, տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվական մեծ հոսքի և զարգացման մի դարաշրջան է, որտեղ ձևավորվում,դաստրաիակվում և զարգանում է մերօրյա սերունդը՝ արժեքներ կրողը։ Ահա, ելնելով այս համատեքստից առաջ եմ քաշում հետևյալ հարցադրումները՝

Արդյո՞ք ընտանիքը դիտարկվում է որպես ազգային արժեք, որքանո՞վ է մեծ դրա կարևորությունը երեխայի դաստիարակության գործում.

Ինչպիսի՞ն է ժամանակակից սերունդը, ի՞նչ պահանջմունքներ և հետաքրքրություններ ունի, ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում.

Ելնելով նոր ժամանակների մարտահրավերներից՝ ինչպե՞ս պետք է իրականացել կրթությունը դպրոցում, որպեսզի և՛ համամարդկային և՛ ազգային արժեքները ճիշտ յուրացվեն ներկա սերնդի կողմից, ինչպես նաև կարողանան այդ արժեքները փոխանցել ապագա սերունդներին՝ ձևավորելով ճիշտ արժեքային համակարգ։

ԳԼՈՒԽ I
Արժեքներ

Ամեն արժեք գեղեցկություն է դառնում,բայց գեղեցկությունն ամեն արժեքից բարձր է ...
Երվանդ Քոչար

Պատմությունը ժողովրդի հավաքական հիշողությունն է, նրա կենսագրությունը: Հայ ժողովուրդը աշխարհի հնագույն ազգերից է, նա պատմական ասպարեզ է եկել անհիշելի ժամանակներից և անցել զարգացման բարդ ու դժվարին, բայց և փառավոր ու հերոսական ճանապարհ: Գալով հազարամյակների խորքերից՝ հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ու ձեռքբերումներով, մտքի թռիչքներով ու արարումներով լի հարուստ պատմություն ու մշակույթ: Հայոց պատմությունը մեծ հնարավորություն է տալիս իրականացնելու մեր ազգային իղձերը ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը: Մեր պատմությունը բովանդակում է մեծ ներուժ,հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն:Վերջերս տեղի ունեցած արհավիրքները (44 օրյա պատերազմ, Արցախի կորուստ, արտագաղթ) պարտավորեցնում են պատմական հարուստ ժառանգության իմացությունն ու յուրացումը, դա ամեն մի հայի պարտականությունն է : Հայոց պատմության դասավանդման հիմնական նպատակներից են սովորողին հիմնարար գիտելիքներ տալ հայկական քաղաքակրթության մասին, զարգացնել սովորողի ճանաչողական, սոցիալական և անհատական կարողություններն ու հմտությունները, ամրապնդել սովորողի հարգանքն ու հպարտությունը հայրենիքի,սեփական պատմության, ավանդույթների և ազգային կրոնական առանձնահատկությունների հանդեպ, դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, բացահայտել նրա անձնային որակները ապահովել սեփական ներուժին համապատասխան ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ տեսակների մեջ նրա մասնակցությունը:

Առարկայի դասավանդման գլխավոր խնդիրն է ազգային և համամարդկային արժեքների իմացության և արժևորման միջոցով նպաստել աճող սերնդի ազգային նկարագրի ամբողջացմանը:

Հետևաբար, մնում է պարզել ի՞նչ են իրենցից ներկայացնում արժեքն ու արժեհամակարգը:

Արժեքն ինչ որ բանի կարևորություն է նշանակությունն ու օգտակարությունն է:

Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ:

Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Արժեքների ճիշտ ընկալումից է ձևավորվում արժեքային համակարգը:

Ըստ ինձ երեխայի արժեհամակարգի ձևավորման սկիզբը դրվում է ընտանիքում, որը համամարդկային արժեքներից կարևորն է:

Մշակույթը ևս կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են հավատն ու սերը: Լինելով միաժամանակ Հայոց եկեղեցու պատմություն առարկայի ուսուցիչ բախվել եմ հետևյալ խնդրին. ինչո՞ւ ենք առանձնացնում հայ առաքելական եկեղեցու պատմությունը, եկեղեցական տոներն ու ծեսերը երբ ողջ ընտանիքը «ավետաբեր» եկեղեցու հետևորդ է: Եվ սկսվում է բանավեճ ազգային եկեղեցական տոները և ծիսակարգերը նշելու և պահպանելու համար: Իհարկե մեր սահմանադրությունը որպես ժողովրդավար պետություն սահմանում է կրոնական այլ ուղղությունների ազատ գործունեությունը: Սակայն սովորողը պետք է կարողանա տարբերել ազգային եկեղեցին և նրա ավանդույթները՝ ցուցաբերելով հանդուրժողականություն: Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու,ստեղծելու,արարելու:Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար:Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են:

Սերը՝ մարդկանց հետ միավորվելու ձգտումն է, սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները:Այն բաղկացած է մի քանի մակարդակներից:

Այլասիրությունը՝ ուրիշին սիրելու,իսկ եսասիրություն՝ սեփական անձը սիրելու երևույթն է:

Կան սիրո այլ դրսևորումներ: Օրինակ՝ սերը անհավասարների միջև,երբ միայն տալիս ես առանց վերադարձի ակնկալիքի:Սիրո այդ ձևն անվանում են մայրական:

Հաջորդը սերն է հավասարների միջև,երբ ինչքան տալիս ես,նույնքան ստանում ես,օրինակ՝ եղբայրական սերը:

Կարևոր արժեք է համարվում ազնվությունը,քանի որ հարգելով սեփական անձը մարդը կարող է միշտ պատասխանատու լինել ցանկացած իրավիճակում, նվիրվել առանց ակնկալիքի և չանտեսել շրջապատող արժեքները:

Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն: Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերում է

արժեքներին, կարող է լինել նաև հակառակը: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը:Ազգին հատուկ արժեքները արտացոլվում են նրա ինքնագիտակցության տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների, բանահյուսու - թյան մեջ:Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ հանրության մեջ բնականոն գործելու համար:

Այսպիսով՝ անհրաժեշտ է տարբերակել արժեք-միջոց և արժեք-նպատակ հասկացողությունները.օրինակ՝ գնահատականը մի բան է որպես միջոց,մեկ այլ բան որպես նպատակ, նմանապես փողը և փառքը: Երբ գնահատականը ոչ թե գիտելիքը դառնում են ծնողի և աշակերտի գերագույն արժեքը, դա հիվանդագին և ախտածին երևույթ է մեր օրերում:

Իսկ արժեքները ընդհանուր համոզմունքներ են,որ անհատը ունի ցանկալի նպատակների վերաբերյալ,որոնց պետք է ձգտել կյանքում:

Արժեքները ավելին են,քան կոնկրետ գործողությունները և համատեքստերը, և դրանք ուղղություն են տալիս թե ինչ պետք է անել կամ մտածել բազմաթիվ տարբեր իրավիճակներում: Արժեքները չափանիշներ են առաջարկում այլոց գործողություն-ները գնահատելու, կարծիքները, մոտեցուներն ու վարքը հիմնավորելու,այլ ընտրանքներից որևէ մեկն ընտրելու,վարքագիծը պլանավորելու և միջավայրում դեր ունենալու համար:

Առանձնացնենք արժեք-արժանիքները,որոնք անձի համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են,այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է «անհատ-ազգ» փոխհարաբերությունների կարգավորման համար:Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները մասնավորապես «հաստատակամություն, աշխատասիրություն, համբերատարություն և այլն » :

Հարկավոր է տարբերակել ազգային արժանիքներ հասկացողությունը, որում առանձնանում է ազգային պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ՝

- Արժանապատվություն

- Արդարամտություն
- Աշխատասիրություն

Արժանապատվությունը սեփական «ես»-ի արժեքի գիտակցումն է : Դա անձի վարքի, արարքների,իրավունքների գնահատականն է, ինքնագնահատականը:

Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ:

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է:Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ,ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա այլ նաև ազդում է արդարադատության վրա :

Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է : Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է :Վերը նշված արժեք-արժանիքները փոխկապակցված են:

Յուրաքանչյուր ազգի կայունության և անկախության կարևոր երաշխիքն է ճիշտ ազգային-արժեքային համակագի ստեղծումը և պահպանումը:

Ազգային-արժեքային համակարգի գլխավոր նպատակը կայացած անհատներ դաստիարակելն է: Իսկ դպրոցում աշակերտների մոտ արժեքային համակարգի ձևավորումը բավականին բարդ և կարևորագույն խնդիր է :

Արժեքների հաջորդ խումբը հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա որ հարկ է դրական վերաբերվել, գնահատել և փայփայել այլ մշակութային պատկա-նելիություններին, այլ կրոնական մոտեցումներ ունեցողներին,այլ տեսակետների ու կարծիքների և գործելակերպի բազմազանությանը : Այստեղից կարելի է ենթադրել որ մշակութային բազմազանությունը, բազմակարծությունը պետք է պաշտպանել անկախ տարբեր ընկալումներից, պետք է ձևավորել միասին ապրելու ու ժողովրդավարական բարքեր և մշակույթ զարգացնելու համար: Բոլոր քաղաքացիները հասարակության ներսում պետք է ակտիվորեն մասնակցեն ժողովրդավարական գործընթացներին,թեև որոշումները պետք է կայացվեն մեծամասնության կողմից, սակայն նաև պետք է ապահովել արդարացի և հավասար վերաբերմունք բոլոր տեսակի փոքրա-մասնությունների նկատմամբ:

Դպրոցում դասապրոցեսին արդարացի վերաբերմունքը, հանդուրժողականությունը, համբերատարությունը բերում է նրան, որ ոչ մի կերպ չի պարտադրվում ազգային եկեղեցու հետևորդ դառնալը,բայց նաև մոռացության չի տրվում ազգային առաքելական եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում և պատմության մեջ։

Այն ազգերը որոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները՝ վրա է հասնում ոգու սովը ։ Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը։

Ամփոփելով արժեքների ուսումնասիրումը մենք տեսնում ենք որ արժեքների հայեցակարգի վրա հիմնված հետազոտությունները կարող են վերաբերվել մարդկային կյանքի տարբեր ոլորտների ։ Արժեքները առանցքային են մարդկային մտքի,զգացմունքների և վարքագծի մեջ ։ Դրանք մշակույթի անբաժանելի մաս են կազմում և հետևաբար արժեքների միջմշակութային հետազոտությունները թույլ են տալիս հասկանալ մշակութային տվյալ ժամանակաշրջանի բնորոշ խնդիրները։

Տարբեր տեսաբաններ օգտագործում են տարբեր մշակութային չափումներ՝ ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմ, ֆեմինինություն-մասկուլինություն, ներդաշնակություն, հավասարություն և այլն, որոնց բազմազանությունը թույլ է տալիս վերհանել արժեքներով պայմանավորված հասարակական առանձնահատկությունների ամբողջ համախումբը : [1]

1 Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր,ԵՊՀ Երևան 2016թ. էջ 236

ԳԼՈՒԽ II

Ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը և կարևորությունը սերունդների դաստիարակության գործում

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական, բովանդակային բազմաթիվ փոփոխություններն իրենց անմիջական գործունեությունն են ունենում անձի ձևավորման, արժեքային համակարգի փոփոխման սոցիալականացման վրա: Երբեմն ինքս եմ դժվարանում իրականացնել արժեքների ձևավորման գործառույթը քանի որ տեղի է ունեցել բարոյամշակութային, ազգային, բարոյահոգեբանական արժեքների վերաիմաստավորում: Տարիքային փոփոխմանը զուգընթաց փոխվում են նաև բարոյամշակութային արժեքները որոնք ուղղակիորեն արտահայտվում են անձի աշխարհայացքում, դաստիարակ - վածության, կրթվածության, զարգացվածության մակարդակում, վարքագծում, հաղորդակցման մոդելներում: [2]

Համաշխարհայնացմամբ (գլոբալիզացիա) պայմանավորված հասարակական արժեքների ձևավորման հիմքում ընկած քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ գործոններ երբեմն խոչընդոտում են անհատի անձի ներդաշնակ և լիարժեք ձևավորմանը : Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճիշտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները : Անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբար նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում լուծելու ժամանակակակից մշակութային միջավայրում ծագած խնդիրները: Այս հանգամանքը ավելի է բարդացնում ազգային արժեքների պահպանումը որի լուծման հարցը դրված է առավելապես ուսուցչի առջև:

21-րդ դարը հումանիզմի դրսևորման,տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվական մեծ հոսքի, աշխարհաքաղաքական նոր խնդիրների, պատերազմների մի դարաշրջան է որտեղ ձևավորվում,դաստիարակվում և զարգանում է մերօրյա սերունդը: Ի՞նչ պահանջմունքներ ու հետաքրքրություններ ունի, ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում նոր սերունդը:

Գաղտնիք չէ որ յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները:

2 Սարգսյան Ա.Ա. Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, ԵՊՀ 2019թ.

Սերունդները օղակ են անցյալի ու ապագայի միջև և ապահովում են ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը այնպես էլ՝ փոփոխումը: Պայմանավորված տարատեսակ հանգամանքներով, տվյալ ժամանակին բնորոշ պատմական իրադարձություններով, մարդկային մտածելակերպի փոփոխություններով ազգային արժեքներ կրող անձի ձևավորումը տարբեր ժամանակներում տարբեր է եղել:
Անկախացման տարիներին Հայաստանին պատուհասած երկրաշարժը,Արցախյան գոյամարտը,Քառօրյա պատերազմը,44-օրյա պատերազմը,Արցախի կորուստը իրենց տխուր հետևանքներն ունեցան բոլորիս ներաշխարհի բարոյահոգեբանական անկման վրա, որը իր հետևանքները թողեց բացասական տարրաբնույթ երևույթների աշխույժ գոր-ծունեության համար : Նման մարտահրավերների առկայության պայմաններում նոր սերնդի՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ բացարձակ չիմացության հետևանքով ազգային արժեքները մղվում են 2-րդ պլան. և ավելի հեշտ ընկալվող դառնում համաշխարհայնացման անցանկալի պահանջները,որոնք բացասական ազդեցություն ունեցան երիտասարդ սերնդի ինքնության, կենսակերպի և արժեհամակարգի վրա: Ի տարբերություն նախորդ դարաշրջանի՝ մերօրյա ազգային առաքինություններից շատերն այլ ընկալում են ձեռք բերել, փոխվել են նաև արժեքային պատկերացումները : Այսինքն՝ ազգային-մշակութային առանձնահատկությունները որոշ չափով մղվել են հետին պլան, վտանգելով և խոցելի դարձնելով մշակութային ինքնությունը: Այս խնդրի հաղթահարման գործը դրված է նոր սերնդի ուսերին: Որքան փոփոխական են խնդիրները այնքան կայուն է դրանք լուծելու անհրաժեշտությունը: Ուստի այս սերունդը ոչ միայն տարբերվում է իր առջև դրված խնդիրներով, այլև դրանք հաղթահարելու եղանակներով ու արդյունքներով : Հետևաբար այս մարտահրավերների պայմաններում պետակաության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից, քաղաքական-տնտեսական և շուկայական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն ու հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը : Այսպիսի իրավիճակներում անփոխարինելի է հոգևոր մշակութային,սոցիալական կենտրոնների և ինստիտուտների դերակատարությունն ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում: Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը : Սոցիալական ինստիտուտների հիմնական նպատակը տիրող մշակութային արժեքների փոխանցումն է : Դրանով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է,այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ

գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վարքագծային նորմեր, ծանոթանալով և յուրացնելով ազգային և համամարդկային մշակույթը : [3]

Սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը՝ որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք: Ընտանիքը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի մշակույթի կրողն է այլ նաև փոխանցողը: Ներընտանեկան ավանդույթներն ու սովորույթներն օգնում են հայեցի դաստիարակություն տալ գալիք սերունդներին՝ նրանց մեջ ձևավորելով ազգային ինքնագիտակցության ոգին: Ինքնության հարցը ներընտանեկան միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվում է հենց ազգային ինքնագիտակցության, մայրենի լեզվին տիրապետելու, պապենական արմատները ճանաչելու, Հայ առաքելական եկեղեցու պատկանելության և ազգային սովորույթների պահպանման գործընթացներում :

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև հայ դպրոցը, որի գերնպաատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ : Կարծում եմ մեր օրերում տեղի ունեցող կրթական բարեփոխումները պետք է նպաստեն ազգային ակունքների պահպանմանը : Դպրոցի առջև դրված առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր մշակութային արժեքների ձևավորումն ու զարգացումն է : Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից : 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ ջանքեր են պահանջվում: Կարևոր է Հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումը ու ուսուցումը : Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները : Հին Հայկական ավանդույթներում է որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը , անդրդվելի կամքը, ապրելու, վերածնվելու, հարատևելու, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը : Ահա այսպես սովորողը պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ այլև պահպանմամբ :

3 Ա.Հ. Սարգսյան, Մշակույթի տեսություն, Երևան 2003,էջ 29

Ինչպիսի գործողություններով եմ պատրաստվում հետազոտական աշխատանքս կյանքի կոչել Հայոց պատմության և Հայոց եկեղեցու պատմության դասաժամերին :

Կից ներկայացնում եմ դասի պլանի նմուշ օրինակ, որը կօգնի սովորողի արժեհամակարգի ձևավորմանը :

Առարկա-Հայոց պատմություն		
Դասարան-8-րդ դասարան	Ուստարի-2023/2024	Կիսամյակ-առաջին

Դասի թեմա	Ազատագրական պատերազմն Արցախում Ազատագրական պատերազմը Սյունիքում
Դասի նպատակը	Ձևավորել՝ 18-րդ դարում Հայաստանի ներքաղաքական և արտաքին քաղաքական վիճակի,Հայաստանի ազատագրության և պետության վերականգնման նպատակով Արցախում և Սյունիքում իրականացված ձեռնարկների վերաբերյալ գիտելիք: Ազատագրական պայքարի ձեռքբերումները և բացթողումները վերլուծելու հմտություն:
Վերջնարդյունքեր	Գիտելիք 8.3.1.Նկարարագրի տարածաշրջանի քաղաքական դրությունը,Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը 18-րդ դարում: 8.3.2.Բացատրի Արցախումն Սյունիքում պետականության վերականգնմանը միտված իրականացված ձեռնարկները: Արժեհամակարգ-հաստատկամություն 8.3.3. Ուսումնասիրի հայ ժողովրդի 18-րդ դարի պատմությունը, ձևավորի բանիմաց վերաբերմունք, հաստատակամություն արժեհամակարգի նկատմամբ, որը առաջնորդում էր հայ ժողովրդին այս ժամանակաշրջանում պետականությունը վերականգնելու ճանապարհին:
Խաչվող հասկացություններ	Օրինաչափություն Անհատներ և հարաբերություններ
Միջառարկայական և ներառարկայական կապերը	Համաշխարհային պատմության՝ Նոր շրջանում Օսմանյան կայսրության պատմություն,Ռուսական պետության պատմություն թեմաների ուսումնասիրություն ,,Հասարակագիտության՝Պետականություն,պետականության վերականգնում և ազատության արժեհամակարգ,Ռազմագիտության՝18-րդ դարի

	ազատագրական պայքարը Արցախում և Սյունիքում ,Մաթեմատիկայի՝ տարեթվեր,ամսաթվեր և զինական ուժերի քանակություն և հարաբերակցություն,Աշխարհագրության՝ տարածքների անվանումներ ու ուղղություններ՝ Արցախ,Սյունիք,Ռուսաստան,Օսմանյան Թուրքիա,Պարսկաստան,Գանձակ,Դերբենդ,Չոլակ և այլն: Հայոցլեզու՝մաքուր,հստակ,անսխալ բանավոր և գրավոր խոսք: Գրականություն՝ Ս.Խանզադյանի «Մխիթար Սպարապետ»,Ռաֆֆու«Դավիթ Բեկ» վեպերը:
Անհրաժեշտ նյութեր և միջոցներ	Համակարգիչ՝լուսացրիչ, դասագիրք,քարտեզ:
Կիրառվող մեթոդներ	Մտագրոհ, Դերային ներկայացում,հարց ու պատասխան,ընդհանուր ամփոփում ՝3-2-1 մեթոդով,գնահատում
Կապը ՀՊՉ հետ	Հ17,Հ26
Դասի տիպը	Նոր նյութի մատուցում
Դասի փուլերը ●Ներածություն ●Հիմնական մաս	Նախորդ թեման ամփոփլու համար կիրառել <<Մտագրոհ>> մեթոդը. 3ր. Լուսացրիչի օգնությամբ պատին ցուցադրվում է 3-4 բոպեանոց տեսաֆիլմ, որից հետո ուսուցիչը սահիկաշարի միջոցով ներկայացնում է նոր թեման: Հասկանալու համար, թե որքանով են աշակերտները յուրացրել դասը, կիրառել <<Դերային ներկայացում>> մեթոդը: Դասի հիմնական մասում դասարանին բաժանվում են դերերը : Դրվում է դերային ներկայացման հիմնական ուղղությունները.

Դերերի՝

Նպատակները և շահերը

Ներկայացնել 18_րդ դարի քաղաքական իրադրությունը, ազգային ազատագրական պայքարի պատճառները,նպատակները:

Իրականացված քայլերը

Ներկայացնել հայկական զինական ուժի կազմավորումը,թուրքական զորքերի առաջխաղացումը,ռազմական բախումներն ու դրանց արդյունքները:

Ձեռքբերումները

Ներկայացնել ազատգրական պայքարի արդյունքում յուրաքանչյուր կողմի ունեցած ձեռքբերումները և հայոց պետականության վերականգմանը միտված քայլերը:

Իրականացված քայլերի արդյունքներն ու հետևանքները

Ներկայացնել ազատագրական պայքարի արդյունքում ունեցած արդյունքները և հետևանքները, ազատագրական պայքարի ընթացքում ծավալված մարտերի դերը,ինչպես նաև կրած կորուստներն ու երկրի սոցիալ-տնտեսական բարդ վիճակը:

Աշակերտները ստանում են դերերը.

Դերեր

Հայաստան

●Հեղինակ

●Եսայի Հասան-Ջալալյան

●Դավիթ Բեկ

●Մխիթար Սպարապետ

●Աբրահամ Սպարապետ

● Պետրոս Մեծ

●Վախթանգ 6-րդ

●Տեր-Ավետիս

●Ավան հարյուրապետ

●Թարխան հարյուրապետ

●Ժողովուրդ

Արհեստավորներ,գյուղացիներ,քաղաքաբնակներ,զինվորներ

Տարածաշրջան

●Օսմանյան կայսրություն

●Ռուսաստան

Հեղինակը 3 բոպե տևողությամբ ներկայացնում է 18-րդ դարի ազատագարական պայքարի պատմական հանգամանքները,պատճառները և դեմքերին:

Այնուհետև երկրները և արքաների կերպարները ներկայացնող աշակերտներից յուրաքանչյուրը ներկայացնում է իր նպատակը,դիրքորոշումը Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ՝պատասխանելով սույն հարցերին.

1.Ի՞նչ նպատակ ունեի կապված Անդրկովկասի հետ:

2.Ո՞րն է իմ դիրքորոշումը Սյունիքում և Արցախումտեղի ունեցող իրադարձությունների հետ կապված:

Ապա ռազմական գործիչներին մարմնավորող աշակերտներից յուրաքանչյուրը իր դիտանկյունից ներկայացնում է հերոսամարտերի՝իր կերպարի(Դավիթ Բեկ,Մխիթար Սպարապետ,Աբրահամ Սպարապետ,Ավան և Թարխան հարյուրապետեր,Տեր-Ավետիս) նպատակները,հաջողություններն ու ձախողումները պատասխանելով հետևյալ հարցին.

1.Ազատագրական պայքարում ո՞րն էր իմ մասնակցության գլխավոր նպատակը,ո՞րը եղավ իմ ձեռքբերումը ,և ո՞րը եղավ իմ անհաջողությունը:

Յուրաքանչյուրին տրվում է 2 ր ժամանակ:

●Ամփոփում	/25 րոպե Այնուհետև Հաջորդը հանդես է գալիս ժողովրդին մարմնավորող աշակերտը՝ յ իր դիրքորոշումը,շահերն ու կորուստները ներկայացնելով. 1.Ինչպե՞ս ազդեց պարսկական տիրապետությունն ինձ վրա ,և ինչպես փոխվեց իմ վիճակը ազատագրական պայքարը.ի՞նչ շահեցի և ի՞նչ կորցրի: /2 րոպե Ողջ դասապրոցեսի ընթացքում պատի վրա լուսացրիչի օգնությամբ ցուցադրվում է սահիկաշար՝կապված 18-րդ դարի ազագարական պայքարի ծավալման և ներկայացման հետ: Կատարվում է թեմայի ամփոփում. Կիրառվում է 3-2-1 մեթոդը. 1.Նշեք 3 բառ,որ իմացաք այս դասին: 2.Նշեք 2 արտահայտություն,որ իմացաք այս դասին: 3. 1 նախադասությամբ ամփոփեք ձեր այսօրվա իմացածը: /3_5 րոպե .
Գնահատում	Կիրառվում է գնահատման անիվ մեթոդը. 1.խանդավառություն 2.գրագետ խոսքը 3.թեմայի բովանդակության համապատասխանություն 4.կանոնների պահպանումը 5.նպատակի հասնելը

	6.նոր ձեռքբերումները 7.հրահանգներին հետևելը 8.ռեսուրսների բազմազանությունը:
Տնային առաջնադրանք	Դասանյութի յուրացում, հանձնարարություն՝ դասի թեմայի շրջանակներում ռեֆերատի կազմում ըստ հետևյալ թեմաների. «Դավիթ Բեկի պատմական կերպարը» «Մխիթար սպարապետի պատմական կերպարը» «Քաղաքական իրադրությունը Արցախում և Սյունիքում 18-րդ դարի 1-ին 30-ամյակում »

Եզրակացություն

Այսպիսով ամփոփելով աշխատանքս համոզվեցի, որ յուրաքանչյուր ազգի կայունության և անկախության կարևոր երաշխիքն է ճիշտ ազգային արժեքային համակարգի ստեղծումը և պահպանումը։

Ազգային արժեքային համակարգի գլխավոր նպատակը կայացած անհատներ դաստիարակելն է։Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը ։ Քանի որ կողմ եմ հասարակության զարգացմանը՝ պահպանելով հինը և համալրելով նորը, սերունդները քայլելով ժամանակին համընթաց և հաղորդակից լինելով համամարդկային արժեքներին անհրաժեշտ է առաջնայնություն տալ ազգայինին։

Ազգային արժեքների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը որպես մեծագույն արժեք ընտանեկան ավանդույթներն ու սովորույթներն օգնում են հայեցի դաստիարակություն տալ երեխային՝ նրա մեջ ձևավորելով ազգային ինքնագիտակցություն ։

Արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության հարցում լուրջ անելիքներ ունի նաև դպրոցը,որի նպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված,ազգային նկարագիր ունեցող սերունդ ։ Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն գիտությունների ճյուղերը այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը ։

Յուրաքանչյուր սերունդ ունի իր մտածելակերպը ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները ։ Սերունդները օղակ են անցյալի ու ապագայի միջև, և արժեքների փոխանցողները հետագա սերունդներին ։

Գրականության ցանկ

1 Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր,ԵՊՀ Երևան 2016թ. էջ 236

2 Սարգսյան Ա.Ա. Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, ԵՊՀ 2019թ.

3 Ա.Հ. Սարգսյան, Մշակույթի տեսություն, Երևան 2003,էջ 29

4 Վիքիպեդիա ազատ հանրագիտարան